ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ 2022թ. պետական բյուջեի նախագծի հիմնական ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ 2019-2021թթ.









2022 թ. պետական բյուջեի նախագծով ՀՀ-ում, ՀՆԱ-ի 104.6 % դեֆլյատորի պարագայում, կանխատեսվում է, որ անվանական ՀՆԱ-ն կկազմի 7 տրիլիոն 869.4 մլրդ դրամ: Ինչը նշանակում է, որ 2022 թվականին ՀՆԱ-ն անվանական արտահայտությամբ 2021 թ. սպասողական ցուցանիշը կգերազանցի 11.9 %-ով, 2021 թ. պետական բյուջեում կանխատեսված ցուցանիշը կգերազանցի 23 %-ով, 2022-2024 թթ. ՄԺԾԾ-ով կանխատեսված ցուցանիշը կգերազանցի 4 %-ով, իսկ 2020թվականի փաստացի մակարդակը կգերազանցի 27.3 %-ով:

ՀՆԱ-ի իրական աճը 2022թ. կանխատեսվում է 7 %: 2021 թվականին սպասվում է 6.5 % տնտեսական աճ, իսկ ՄԺԾԾ-ով ծրագրված է 5.2 % աճ: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետությունը տնտեսական աճի 2022թ. կանխատեսվող ցուցանիշով առաջատար է ԵԱՏՄ գործընկեր-երկրներից և Վրաստանից: ՀՀ-ում ՀՆԱ-ի 7 % իրական աճի պարարգայում, *ՌԴ-ում կանխատեսվում է ՀՆԱ-ի 2.8 % իրական աճ, Ղազախստանում՝ ՀՆԱ-ի 3.7 % իրական աճ, Ղրղզստանում՝ ՀՆԱ-ի 4.7 % իրական աճ, Վրաստանում՝ ՀՆԱ-ի 5.5 % իրական աճ, իսկ Բելառուսի Հանրապետությունում՝ ՀՆԱ-ի իրական անկումը կկազմի 2.8 %:

2022 թ. ՀՆԱ-ի աճին տնտեսության ճյուղերի նպաստման տեսանկյունից առաջատար է ծառայությունների ճյուղը՝ 3 %-ային կետ՝ 2021 թվականի պետական բյուջեով կանխատեսված 2.1 %-ային կետ աճի դիմաց: 2022 թ. ՀՆԱ-ի աճին դրականորեն են նպաստելու նաև արդյունաբերությունը՝ 1.6 %-ային կետ՝ 2021 թ. կանխատեսված 1 %-ային կետ աճի դիմաց, շինարարությունը՝ 1.2 %-ային կետ՝ 2021 թ. կանխատեսված 0.3 %-ային կետ աճի դիմաց, զուտ անուղղակի հարկերը՝ 0.7 %-ային կետ՝ 2021 թ. կանխատեսված 0.9 %-ային կետ աճի դիմաց և գյուղատնտեսությունը 0.4 %-ային կետ՝ 2021 թվականի կանխատեսված 0.5 %-ային կետ աճի դիմաց:

*Աղբյուրը՝ "Competition and Firm Recovery", Post-COVID-19, Office of the Chief Economis, World Bank ECA Economic Update Fall 2021, https://openknowledge.world-bank.org/bitstream/handle/10986/36296/9781464818028.pdf?sequence=5&isAllowed=y

ԱԺԲԳ









Ապրանքների և ծառայությունների արտահանում/ՀՆԱ ցուցանիշը 2022 թ.-ին կանխատեսվում է 34.5 %՝ բարելավելով 2021 թ. սպավող ցուցանիշը 1.9 %-ային կետով, 2020 թ. փաստացի ցուցանիշը՝ 4.7 %-այի կետով: Այդուհանդերձ, այն ՄԺԾԾ-ով կանխատեսված մակարդակից ցածր է 0.3 %-ային կետով:

Ապրանքների և ծառայությունների ներմուծում/ՀՆԱ ցուցանիշը 2022 թ.-ին կանխատեսվում է 45.4 %՝ 2021թ. սպավող ցուցանիշից ավել 3.2 %-ային կետով, 2020թ. փաստացի ցուցանիշից ավել 5.7 %-այի կետով, բայց 0.3 %-ային կետով պակաս ՄԺԾԾ-ով կանխատեսվածից:

Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռը 2022 թ. կանխատեսվել է -10.9 %, որը համապատասխանում է ՄԺԾԾ-ով կանխատեսված ցուցանիշին, 1.3 %-ային կետով ավել է 2021 թ. սպասողականից և 1 %-ային կետով ավել է 2020 թ. փաստացիից:

2022 թվականին՝ 2021 թ. կանխատեսվածի և 2020թ. փաստացիի համեմատ կբարելավվի ընթացիկ հաշիվ / ՀՆԱ ցուցանիշը, համապատասխանաբար՝ 3.1 %-ային կետով և 0.8 %-ային կետով: Այդուհանդերձ, որոշակի վատթարացում է կանխատեսվում 2021 թ. սպասողականի (1.3 %-ային կետ) և ՄԺԾԾ-ով կանխատեսվածի (0.1 %-ային կետ) համեմատ:

Միջին գնաճը 2022 թ.-ին կանխատեսվում է 5.6%-ի մակարդակում, որը 1.4 %-ային կետով պակաս է 2021թ. սպասողականից, սակայն 4.4%-ային կետով բարձր է 2020թ. փաստացիից և 1.5 %-ային կետով ավել է ՄԺԾԾ-ով կանխատեսվածից:

Գնաճը ժամանակաշրջանի վերջում 2022 թ.-ի համար կանխատեսվում է 5.2%՝ 2.2 %-ային կետով պակաս 2021թ. սպասողականից,1.5%-ային կետով բարձր 2020թ. փաստացիից և 1.2 %-ային կետով ավել ՄԺԾԾ-ով կանխատեսվածից:

2022 թ. պետական բյուջեի նախագծով՝

- եկամուտները ծրագրվել են 1 տրիլիոն 946.2 մլրդ դրամ, ինչը ՄԺԾԾ-ով կանխատեսված մակարդակը գերազանցում է շուրջ 7 %-ով, 2021թ. սպասողականից ավել է 17.5 %-ով, իսկ 2020 թ.փաստացիին գերազանցում է 24.7 %-ով,
- ծախսերը ծրագրվել են 2 տրիլիոն 189.2 մլրդ դրամ, ինչը ՄԺԾԾ-ով կանխատեսված մակարդակը գերազանցում է 9.4 %-ով, 2021թ. սպասողականից ավել է 10.2 %-ով, իսկ 2020 թ.փաստացիին գերազանցում է 15.5 %-ով,
- դեֆիցիտը ծրագրվել է 243 մլրդ դրամ, ինչը ՄԺԾԾ-ով կանխատեսված մակարդակից ավել է 33.7 %-ով, սակայն 2021թ. սպասողականից և 2020 թ.փաստացիից պակաս է համապատասխանաբար՝ 26.1 %-ով և 27.2 %-ով:

ԱԺԲԳ









2022 թ. պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 24.7 %, որը 2021թ. սպասողականից բարձր է 1.1 %-ային կետով, ՄԺԾԾ-ով 2022 թ. համար ծրագրված մակարդակը կգերազանցի 0.7 %-ային կետով, իսկ 2020թ. փաստացի մակարդակից պակաս է 0.5 %-ային կետով,

2022 թ. պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 27.8 %, որը 2021թ. սպասողականից պակաս է 0.4 %-ային կետով, ՄԺԾԾ-ով 2022 թ. համար ծրագրված մակարդակը կգերազանցի 1.4 %-ային կետով, իսկ 2020թ. փաստացի մակարդակից պակաս է 2.8%-ային կետով,

2022 թ. պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը ծրագրվել է -3.1%՝ 1.6 %-ային կետով բարելավելով 2021 թ. սպասողական ցուցանիշը, 2.3 %-ային կետով բարելավելով 2020 թ. փաստացին, իսկ ՄԺԾԾ-ով ծրագրված ցուցանիշը կգերազանցի 0.7 %-ային կետով:

2022 թ. պետական բյուջեի նախագծով եկամուտները ձևավորվելու են՝

- հարկային եկամուտներից և պետական տուրքերից՝ 1 տրիլիոն 843.8 մլրդ դրամ, որը կազմում է ՄԺԾԾ-ով 2022 թ. համար սահմանված մակարդակի 106.4 %-ը, 2021թ. սպասողականը կգերազանցի 16.6%-ով, իսկ 2020թ. փաստացին կգերազանցի՝ 33.1%-ով,
- պաշտոնական դրամաշնորհներից՝ 40.3 մլրդ դրամ, որը կազմում է ՄԺԾԾ-ով 2022 թ. համար սահմանված մակարդակի 152.1 %-ը, 2021թ. սպասողականը կգերազանցի 68.6 %-ով, իսկ 2020թ. փաստացիից պակաս է 24.4 %-ով,
- այլ եկամուտներից՝ 62.1 մլրդ դրամ, որը ՄԺԾԾ-ով 2022 թ. համար սահմանված մակարդակը կգերազանցի 4.2 %-ով, 2021թ. սպասողականը կգերազանցի 19.4 %-ով, իսկ 2020թ. փաստացիից պակաս կլինի 49.2 %-ով:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը 2022թ. պետական բյուջեի նախագծով կանխատեսվում է 23.4 %, ինչը 2021 թ. սպասողական ցուցանիշը գերազանցում է 0.9 %-ային կետով, ՄԺԾԾ-ով 2022 թ. համար սահմանված մակարդակը գերազանցում է 0.9 %-ային կետով, իսկ 2020թ. փաստացի մակարդակց մեծ է 1 %-ային կետով:

2022 թ. պետական բյուջի նախագծով ընթացիկ ծախսերը ծրագրվել են 1 տրիլիոն 842.7 մլրդ դրամ՝ 4.6 %-ով ավել քան սպասվում է 2021թ.-ին, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները 346.5 մլրդ դրամ, 54.8 %-ով ավել 2021թ. սպասվածից:









2022 թ. պետական բյուջեի նախագծում՝

- ընթացիկ ծախսերը ծրագրված են ՀՆԱ-ի 27.8 %-ը՝ 2021թ. սպասվող 28.2 %-ի և 2020թ. փաստացի 27 %-ի դիմաց,
- ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը), որոնք ծրագրված են 356.6 մլրդ դրամ կազմում են ՀՆԱ-ի 4.5 %-ը՝ 2021 թ.-ին սպասվող 3.2 %-ի և 2020թ. փաստացի 3.7 %-ի դիմաց:

2022 թ. պետական բյուջեի նախագծում՝

- 432.3 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին, որը 8.9%-ով ավել է 2021թ. պետական բյուջեով հաստատվածից և 25.5 %-ով ավել է քան 2020թ. փաստացին էր,
- 213.5 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել տնտեսական հարաբերությունների բաժնին, որը 43.4 %-ով ավել է 2021թ. հաստատված մակարդակից և 70.1 %-ով ավել է 2020թ. փաստացիից,
- 346.9 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել պաշտպանության բնագավառին, որը 11.1 %-ով ավել է 2021թ. հաստատված ցուցանիշից, բայց 10.5 %-ով պակաս է 2020 թ. փաստացիից: Ընդ որում, 2022 թ. պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 4.4 %-ը,
-171.9 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին, որը 9.8 %-ով ավել է 2021թ. հաստատված մակարդակից և 13.5 %-ով ավել է քան 2020թ. փաստացին է,
-9.9 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել շրջակա միջավայրի պաշտպանությանը, որը 8.8 %-ով պակաս է 2021թ. հաստատվածից, բայց 2.2 անգամ գերազանցում է 2020թ. փաստացիին,
- 16.6 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին, որը 13 %-ով ավել է 2021թ. հաստատված մակարդակից և 86.6 %-ով գերազանցում է 2020թ. փաստացիին,
- 122.7 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել առողջապահությանը, որը 4.4 %-ով ավել է 2021թ. հաստատվածից, բայց 17.2 %-ով պակաս է 2020թ. փաստացիից,
- 581.4 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել սոցիալական պաշտպանությանը, որը 15.2 %-ով ավել է 2021թ. հաստատվածից և 6.4 %-ով ավել է քան 2020թ. փաստացին է:

ԱԺԲԳ









2022 թ. պետական բյուջեի նախագծում՝

- 192.7 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել կրթության բնագավառին, որը 25.5 %-ով ավել է 2021թ. համար հաստատված և 34.1 %-ով ավել է 2020թ. փաստացի մակարդակներից,
- 32.5 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառներին, որը 6.3 %-ով ավել է քան հաստատվել էր 2021թ. պետական բյուջեով, բայց 3.3 %-ով պակաս է 2020թ. փաստացիից,
- 68.6 մլրդ դրամ նախատեսվում է տրամադրել հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր բաժնին:

2022 թ. պետական բյուջեի նախագծով, կանխատեսվում է՝

- ՀՀ պետական պարտքը կկազմի 4 տրիլիոն 991 մլրդ դրամ, որը 10.7 %-ով ավել է 2021թ. սպասողականից և 19.9 %-ով ավել է քան 2020 թ. փաստացին էր,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի 3 տրիլիոն 522 մլրդ դրամ, որը 6.7 %-ով գերազանցում է 2021թ. սպասողականին և 11.2 %-ով ավել է 2020թ. փաստացիից;
- ՀՀ ներքին պետական պարտք կկազմի 1 տրիլիոն 469 մլրդ դրամ, որը 21.5 %-ով ավել է 2021թ. սպասողականից և 47.2 %-ով ավել է քան 2020թ. փաստացին էր,
- ՀՀ պետական պարտքը ԱՄՆ դոլարով արտահայտված կկազմի 10 միլիարդ 111.4 մլն , որը 11.9 %-ով ավել է 2021թ. հաստատվածից և 26.9 %-ով ավել է 2020թ. փաստացիից,
- ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի 7 մլրդ 135.3 մլն ԱՄՆ դոլար, որը 9.5 %-ով ավել է 2021թ. հաստատվածից և 17.9 %-ով ավել է քան 2020թ. փաստացին էր,
- ՀՀ ներքին պետական պարտք կկազմի 2 մլրդ 976.1 մլն ԱՄՆ դոլար՝ 18.1%-ով ավել է 2020թ. հաստատվածից և 55.4 %-ով ավել է 2020թ. փաստացիից,
- ՀՀ կառավարության պարտքը կկազմի 4 տրիլիոն 740.2 մլրդ դրամ, որը 3.5 %-ով ավել է քան ծրագրվել է ՄԺԾԾ-ով, 10.9 %-ով ավել է 2021թ. սպասողականից և 20.8 %-ով ավել է 2020թ. փաստացիից,
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը կկազմի 250 մլրդ դրամ, որը 5.9 %-ով ավել է քան սպասվում է 2021թ.-ին և 4 %-ով ավել է 2020 թ. փաստացիից,

2022 թվականի ՀՀ պետական պարտքի ցուցանիշները, որոնք արտահայտված են ԱՄՆ դոլարով հաշվարկվել են հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծում կանխատեսված 1 ԱՄՆ դոլար= 493.6 դրամ հարաբերակցությունը:

ԱԺԲԳ









- ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 9 մլրդ 603.3 մլն, որը 12.3 %-ով ավել է 2021 թ. հաստատվածից և 27.9%-ով գերազանցում է 2020թ. փաստացիին,
- ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 506.5 մլն, որը 4.6 %-ով ավել է 2021 թ. հաստատվածից և 10.1%-ով գերազանցում է 2020թ. փաստացիին,
- ՀՀ կառավարության արտաքին պարտքը կկազմի 3 տրիլիոն 271.2 մլրդ դրամ, որը 4 %-ով ավել է ՄԺԾԾ-ով ծրագրված մակարդակից, 6.7 %-ով ավել է 2021 թ. սպասողականից և 11.8 %-ով ավել է 2020թ. փաստացիից,
- ՀՀ կառավարության ներքին պարտքը կկազմի 1 տրիլիոն 469 մլրդ դրամ, որը 2.5 %-ով գերազանցում է ՄԺԾԾ-ով ծրագրվածին, 21.5 %-ով ավել է 2021 թ. սպասողականից և 47.2 %-ով ավել է 2020թ. փաստացիից,
- ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 6 մլրդ 627.3 մլն, որը 9.5 %-ով ավել է 2021 թ. հաստատված մակարդակից և 17.9 %-ով ավել է 2020 թ. փաստացիից,
- ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կկազմի 2 մլրդ 976.1 մլն, որը 18.1 %-ով ավել է 2021 թ. հաստատվածից և 55.4 %-ով գերազանցում է 2020թ. փաստացի ցուցանիշը,
- ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կանխատեսվում է 63.4 %-ի մակարդակում, որը 0.7 %-ային կետով պակաս է քան սպասվում է 2021 թ. -ին և 4 %-ային կետով պակաս է 2020 թ. փաստացիից,

2022 թվականի ՀՀ պետական պարտքի ցուցանիշները, որոնք արտահայտված են ԱՄՆ դոլարով հաշվարկվել են հիմք ընդունելով ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծում կանխատեսված 1 ԱՄՆ դոլար= 493.6 դրամ հարաբերակցությունը:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ (%)



ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ(%)



ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ (%)





- ՀՀ արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կանխատեսվում է 44.8 %, որը 2.1 %-ային կետով պակաս է քան սպասվում է 2021թ. -ին և 6.4 %-ային կետով պակաս է 2020թ. փաստացիից;
- ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 60.2 %, որը 0.6 %-ային կետով պակաս է քան սպասվում է 2021 թ.-ին, 0.3 %-ային կետով պակաս է քան կանխատեսվել է ՄԺԾԾ-ով և 3.3 %-ային կետով պակաս է 2020թ. փաստացի մակարդակից,
- ՀՀ կառավարության արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի 41.6 %, որը 5.3 %-ային կետով պակաս է 2021 թ. սպասողականից և 5.7 %-ային կետով ավել է 2020թ. փաստացիից:
- ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքը կկազմի 31 %՝ 2.7 տոկոսային կետով պակաս քան սպասվում է 2021 թ. և 5.5 տոկոսային կետով ավել քան 2020թ. փաստացին էր: Հատկանշական է, որ այս ցուցանիշը համահունչ է ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024թթ. ռազմավարական ծրագրի ուղենշային ցուցանիշին, ըստ որի ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ներքին պարտքը պետք է լինի առնվազն 25 %:

*Տեղեկատվության աղբյուրներն են՝ ՀՀ 2019-2020թթ. պետական բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունները, ՀՀ 2021 թ. հաստատված պետական բյուջեն, ՀՀ 2022 թ. պետական բյուջեի նախագիծը, 2022-2024 թթ. ՄԺԾԾ-ն, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները և Համաշխարհային բանկի հունիս ամսվա զեկույցը՝ Համաշխարհային տնտեսական հեռանկարների վերաբերյալ: